ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի Քարտուղարության Արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնում ներգրավված փորձագետ Միեր Հովսեփյանի 2025 թվականի ապրիլի 23-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածի

2025 թվականի ապրիլի 23-ին կնքված թիվ 5 պայմանագրի համաձայն՝ Կոմիտեի Քարտուղարության Արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնում ընդգրկվել եմ որպես փորձագետ:

Համաձայն Կոմիտեի նախագահի 2025 թվականի ապրիլի 15-ի թիվ 166-Ա Հրամանով հաստատված հավելվածի 5-րդ կետի՝ ներկայացնում եմ 23.04.2025-23.10.2025թթ. ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Պետական գույքի էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) աշխատանքի բարելավում, Համակարգի աշխատանքի խափանումների (ներառյալ՝ ծրագրային և այլ բնույթի թերությունների ու բացթողումների) վերացման (շտկման) նպատակով անհրաժեշտ տեխնիկական աշխատանքների իրականացում,
- Համակարգի բնականոն աշխատանքի մշտադիտարկում և փորձարկման անընդհատության ապահովում,
- E-payments էլեկտրոնային վճարումների համակարգի հետ աշխատանքների մշտական կարգաբերում,
- էլեկտրոնային աճուրդների հաղթող մասնակիցներին Համակարգի կողմից էլեկտրոնային նամակների ուղարկում,
- e-auctions.am կայքի անվտանգության SSL սերտեֆիկատի տեղադրում սերվերի վրա,
- Աճուրդների ընթացքում տեխնիկական անսարքությունների, ինչպես նաև դիմում-բողոքների դեպքում աճուրդների վերաբերյալ եզրակացության տրամադրում,
- Հիմնականում՝ e-auctions.am-ի հետ կապված աշխատանքների իրականացում,
- Ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականների իրականացում:

Արտաքին կապերի և
ինֆորմատիկայի բաժնի փորձագետ
Միեր Հովսեփյան

10.11.2025թ.